

ՄԱՏԵՆԱՒՍՍՈՒԹԻՒՆ

ՍԱՐԱՂԻՍՍ ԱՍՏՈՒԱԾ ԱՌ ՀԱՅՍ

Գիտութիւններէ Կայսերական ձեւարանը 1911 թուին հրատարակել է տիպոգրֆիկ Պ. Ն. Մառի — «Богъ Забѣлюсъ у Армянъ» — «Սարաղիոս Աստուած առ Հայս» վերնագրով լեզուաբանական ուսումնասիրութիւնը, որ ղեկուցուած է նոյն ձեւարանի պատմական-բանասիրական բաժնում տարւոյս ապրիլի 27-ին:

Կամենալով Արարատի ընթերցողներին ծանօթացնել այդ ուսումնասիրութեան հետ թարգմանաբար հրատարակում ենք կարեւոր կէտերն ու եզրակացութիւնը:

Ըստ Tomasehek-ի, գրում է պ. Մառը, Փռիւղիական Տաթաւիոս-ի եօթն ձևեր կան, այն է. Տաթաւիոս, Տաթաւիոս, Տաթաւիոս, Տաթաւիոս, Տաթաւիոս, Տաթաւիոս, Տաթաւիոս: Նոյն հետազոտողի կարծիքով փռիւղիական աստուածը, որին առաջին անգամ յիշում է Արիստոփանը, կայսրների ժամանակ Թրակիա էլ անցաւ...: Կան բանասէրներ էլ, ինչպէս Kretschmer. որոնք համարում են, որ Սարաղիոս-ը եւրոպայից է մուծուել Փոքր—Ասիա:

Պ. Ն. Մառ երկու կողմի կարծիքներն ու նրանց լեզուաբանական վերլուծութիւնները մէջ բերելով, ասում է, որ Tomasehek-ի և Kretschmer-ի հետազոտութիւնները միայն մի բան են լիովին հաստատում — դրանք հաւատարապէս ապացուցանում են Սարաղիոս (Տաթաւիոս) աստուծու անուան լեզուաբանական մեկնութեան դժուարութիւնը հնդեւրոպական տեսակէտով. և, Սարաղիոս անունի ծագման խնդիրը համարելով չլուծուած, աւելցնում է.

Մենք այժմ կը խօսենք ոչ թէ բառի ծագման մասին, այլ թէ այդ տերմինը հայերն էլ ունեն, ի հարկ է ըստ օրինի, փոփոխուած, և այն էլ շատ փոխուած ձևերով: Կուլտուրական-պատմական տեսակէտից կարեւոր է արդէն այն, որ այդ տերմինի կիրառութիւնը հայերի մէջ առաջ է բերում նոր, շատ կարեւոր ապացուցութիւն յօդուտ այն հաւատարմութեան, թէ հայերը փռիւղացիներից ցեղակից են:

Յենուելով մի քանի աւանդութիւնների վերայ, հիմք կայ կարծելու, որ հնդեւրոպական արմէնները ծագել են փռիւղիացիներից. մեր տեսութեամբ, ի հարկ է, ոչ բոլորը, այլ միայն հնդեւրոպական տարրի արմէնները, որոնք արիական-պատմական Արմենիայի (Հայաստանի) ընտելութեան լրութեան մէջ

նորակազմ արմէններին ու հայերի-այդ երկու դիւանոր տիպերի հիմքն են կազմում:

Եթէ Սաբադիոս (Σαβάζιος) տերմինի ծագումը պարզուած լինէր, ապաքէն մենք կարող կը լինէինք, յայտնել, որ Սաբադիոսը հնդեւոսդական Արմենիա-Հայաստանի աստուածն էր, ինչպէս և Յաբեթական Արմենիա-Հայաստանը կարող էր ունենալ իւր յատուկ աստուածը, օրինակ՝ կերպ (kerp)* և այն էլ ոչ մէկ: Սակայն դեռ պարզուած չէ Սաբադիոսի հնդեւոսդական ծագումը և հիմք էլ չկայ կործելու, թէ այն Մակեդոնիայից է մուծուել Փոքր-Ասիա և ոչ ընդհակառակն՝ Փոքր-Ասիայից Մակեդոնիա և կամ, ինչպէս լեզուաբանական առեւալները ցոյց կը տան՝ Հայաստանից, այսինքն, Յաբեթական աշխարհի միջավայրից: Հետևաբար կարելի է հարց տալ թէ Սաբադիոսը յաբեթական ծագման տերմին չէ՞ արդեօք:

Եթէ Սաբադիոս տերմինը Պրակիայից էլ մուծուած լինի Փոքր-Ասիա և ասիականից Հայաստան, դարձեալ կարելի է նրան յաբեթական ծագումն վերագրել:

Հայերի մօտ, Սաբադիոս (Σαβάζιος) տերմինը միշտ էլ, մինչև անգամ քրիստոնէութիւն ընդունելուց յետոյ ևս, պահպանուել է և հանդէս է գալիս բարբառային բազմադան կերպարանափոխութիւններով, որոնք մերձենում են երկու, եթէ ոչ երեք հիմնական տերմիններին, աւելի ճիշդ, սկզբնատիպերին: 1, Սաբաթ (Sabat) 2, Սաբաց (Sabad): «Յայց ասուած երկու սկզբնատիպերը ըստ հայ և արմէն լեզուների հնչիւնի, որ համեմատաբար նման է յաբեթական հնչիւնին, վերջում կցելով մէկը խուլ ծ-ն, միւսը միջին ց ծ, գանւում են ձայնական շարժման երկու ծայրերում և առաջ են բերում անխուսափելի երրորդ տիպը-ձ-ձ հնչիւնը: Երկու տեսակի մէջ էլ այս ձևը հանդիսանում է Թրակո-փռիւզիական արտադրութիւն (Σαβάζιος, Sabadius), բայց և այն օտար չէ հայկականին: ...

Սկզբնական ձևերի հետևորդ պատմութիւնը, Հայաստանի առմամբ, կապ ունի հայ և արմէն հնչիւնի հիմնական երեք օրէնքների հետ՝ ա. նախ, նախատիպերը բառի սկզբում ենթարկուել են տեղափոխութեան օրէնքին ... օրինակ Սաբաթ (Sabat) > ասված=asvat, փոխ ապրած asbat բայց բ (b) հնչիւնը մերձելով մունջ ս (s)-ին=ասպած (asbat, որը գէթ ունցոց խօսուածքի մէջ արտասանւում է ասբոթ (asbot) > ասպոթ, բ. երկրորդ սկզբնատիպը միջին ց ծ-ով նոյն ժամանակ իւր սովորական

* Н. Марръ. Еще о словѣ «Челеби». Зап. Вост. отд. Имп. Русс. Археіол. общ. XX, стр. 13. сл.

տառադարձութեամբ, այն է ց (ծ) - փոխուում է ր-ի. օրինակ սաբայ=sabaծ > (ասվաց-asvaծ >) ասվար, (ասպաց=aspaծ >) ասպար-aspar, վերջապէս դ. սաբած-sabat > սկզբնատիպ սաբածը (sabat) բաժանելով կոշտի (ասբած ասբօծ) և շրթնային մեղմի (ասված) զուգընթացաբար վերջինիս՝ ծագել է վ- (v) կիսաձայնի տեղ ւ (w) թոյլ բաղաձայնի այլադանութիւնը, և այդպէս, ս-(s) ձայնաւոր ա (a)-ի և կիսաձայն (w)-ի մէջ դարձել է ստ (st), այսպէս ասված-տուած-ը (asvat||aswat) աստուած (astwat): Տ առի վերայ այսպիսի տ յաւելացում նկատելի է հայ բարբառներում, օրինակ. Խոսրով-ի, փոխանակ պատահում է Խոստրով ¹⁾ 1581 թ. ձեռագրերում և արձանագրութիւնների մէջ, ինչպէս է Հաղբատի առանց թուականի արձանագրութիւնը, հաւանօրէն ԺԳ. դարի. (Չալալեանց. ճանապարհորդութիւն I. եր. 63) *): Որովհետեւ հայերէնում աստուած բառը պատուով է գրւում, օրինակ Ա՜ծ, Ա՜յ, ևն. նրա լրիւ արտայայտութիւնը, որ հայ (hañ) գրչութեան մէջ կոչւում է աստուած (աղաւաղ ընթերցմամբ՝ աստրւած փոխ, աստված) դիւրաւ կարելի է մեկնել որպէս պայմանական, որ կապ ունի հայ (hañ) գրչութեան անկատարութեան հետ, յատկապէս կոշտ վ- հնչիւնը անմիջապէս բաղաձայնի փոխանցելիս. սակայն այս ուղղագրական թերութեան մէջ, իմ կարծիքով հայ հնչիւնական մի առանձնութիւն, որ բնորոշում է հայ (hañ) բարբառը. ներկայ հանգամանքում՝ հայ (hañ) լեզուն կարող է իւրացրած լինել բառը նոր փոփոխութեամբ, որը լիովին մերձենում է յունական Սաովանդիոս (Σαουανδριος) ձևին, որը, ինչպէս ցոյց է տալիս Kretschmer-ը, հաստատւում է իսկական բնագրով. ըստ այսմ հայական (hañskiñ) աստուած. ձևը կարող է ծագած լինել նախատիպ սաուած-saowat-ից (յոյն-saowadioc) աստուած-ի միջոցով: Այո, արմենական բարբառներում էլ հետաքրքիր է, որ ս. կրկնակ ստ դարձնելը յատուկ էր միայն որոշ բարբառներին, յայտնի շրջանում, և պէտք է կարծել ստացել էր արտակարգ նշանակութիւն: Պէտք է ենթադրել որ ընդհանրապէս ասված=տուած, փոխ. աստուած, նոյնպէս ասֆած և ասբած փոխ. ասպած և ասբոծ ձևերը, որ մերձենում են սաբած սկզբնատիպին, և կազմում էին արմենական լեզուի առանձնութիւնը, իսկ ասվար փոխ. ասպար-ձևը որ մերձենում է սաբաթ-սաբաց sabaծ- (< sabaծ. սկզբնատիպ պատ-

1) Բակովր Թօփչեան. ցուցակ մեռադրաց Դատեան Նաչիկ վարդապետի. Մ. Բ. Վարդաշապատ. 1900 թ. եր. 52.

*) Հայ մի քանի դաւաճներում սովորաբար դարձ են ածում էսպէս, էդպէս, էնպէս, Է. Թարգ.

կանուժ է իսկ հայ (hañ) բարբառին: Յօգուտ վերջին ենթադրու-
թեան կարելի է դիւրաւ շահագործել և այն, որ ասվար և ասպար
այլադաննութիւնները պահպանուած են այն բարբառների և
խօսուածքների մէջ, որոնք աւելի մերձ են հայական (hañ)
լեզուին: Սակայն վճռել այդ խնդիրը հայ բարբառների այժ-
մեան ուսումնասիրութեան չափով, վաղաժամ է:

Այլադանութիւնը (ծ') հնչիւնով ինչպէս փոխդիական-
թրակական յարանունութիւններում հանդիսանում են առ-
տոձ-astod', թիֆլիսեցոց աստուձ-astud' ձևով. այդ ձևերը կարող
են առաջ եկած լինել ասուած-astwad' փոխ. ասուած—aswad
ձևի միջոցով, որ յարաբերում է նախատիպ սաված-savad ձևին:
Եթէ դրանց մէջ նոյն օրէնքին համեմատ ծ (t) ձ (ծ') չէ հնչուել:

Հետաքրքիր է, որ ասվար և ասպար ձևերը Աստուած նը-
շանակութեամբ պահուել են Խոյեցոց ու Մոկացոց բարբառ-
ների մէջ՝ աստուածածին, որ հայերէն որ սովորաբար աստված-
ա-ծին է հնչւում, բարդ բառում, որ հայերէն (hañ) դարձել է
աստուած ա-ծին astowat-a-tin: Մոկաց բարբառով նոյն բառը
հնչւում է ասպարածին, և այդ հանդիպում է «Դաւիթ և
Մհեր» ժողովրդական վիպերգի «Մարութայ բանձր ասպարածին»
նախադասութեան մէջ: Նոյն վիպերգի մէջ ասվարածին ձևն
էլ է պատահում, որով բառը ընդունել է ոչ միայն արմեն
առողանութեան ստ կրկնատառը, այլ և ստացել է հաւանո-
ւէն, գրական ձևի ազդեցութեան տակ, թէ մոկացոց բարբա-
ռում և թէ դրի առնողի զբչի տակ, աստուարածին ուղղա-
գրութիւնը: Ուրիշ աեղերում էլ պատահում է այդ ձևը. Հայ-
կունի Эминянскій этнографическій сборникъ. II, стр. 27,2): Ի
դէպ, ասվար-ա-ծին ձևը յատուկ է ոչ միայն մոկացոց այլ և
խոյեցոց բարբառին: Այս իւր ենթադրութիւնը հիմնում է Ն.
Մառը խոյեցիների Յննդեան հետեւեալ երգի վերայ, որ գրի
է առել իւր ունկնդիր ուսանող Աշխ. Քալանթարեանը Սալ-
մասացի ուսանող Ս. Աւագեանի թելադրութեամբ:

Թադա՞ խաց ի, խոտ ի կա՞լի:

Ելէք ըշկացէք էն դօր ի կա՞լի:

Երեք ծիավոր էկավ.

Մէյն էր Հիսոս, մէյն էս Քրիստաւոս

Մէյն էր անձէն ասվարածին:

Ըլնենք տարով, էջնենք ծորով:

Քրիստաւոս էկավ խաղար պարով

Քրիստաւոս, աման, չարքս տանես. պարին (sic) բէրես.

Ասվարածին ձևը, Առլըմսլուեցի Աւետ. Ահարոնեանի և

ապարանցի Յովհ. Սաղաթիէլեանի բերանացի հաղորդածի վերայ հիմնուելով սովորական է Խոյից դադարած Սուրմաշուի և Թուրքիայից ու Պարսկաստանից դադարած Ապարանի հայ բնակիչների բոլոր շրջաններում:

Մի ուրիշ հետաքրքիր ձևը պահուած է զէյթունցիների խօսուածքի մէջ ա-ի տեղ ու բարբառային ասքոճ, ասպոճ հնչմամբ ինչպէս պարզ Աստուած, նոյնպէս և բարդ տարածոճին բառերում, իսկ Վանայ բարբառում կայ և ա ձայնաւորով նախատիպըւսուած (Ե. Աւլայեան. Աղղ. Հանդ. XX 1970, 62, 78), որից և անպաճածին:

Շատ հետաքրքիր է, գաւառաբարբառներում ասած ձևը, որ ակներև ապացուցանում է, թէ բառ մի որ և է շրջանի հայ ժողովրդի սեպհականութիւն չէ . . . աստված, սեռ. ասածու, հայ բարբառին յատուկ առ երկեակ տառքով, կան և ասված, ասւած, սեռ. ասծղւ, ասսու այսինքն ա-ն ս-ի փոխուած: Բաշուի բարբառում ասսու էլ է հնչւում, թէև այստեղ ուղղական հոլովում երկրորդ ս-ն Ֆ է փոխւում, որը ի դէպ, դարձեալ հաստատում է ասված, ասւած հնչիւնների գոյութիւնը: Յ հայերէնում կարող էր առաջ դալ անմիջապէս -ից: Ի՞նչ բարբառից էլ որ ծագելիս լինի, կենդանի խօսուածքի մէջ սեռ. հոլովը ասծու-ast u է, և առ այժմ դժուար է ասել, միշտ էլ ասծու փոխ. ասարծ-ու՝ ասուծու-ի միջոցով առաջ է գալիս ասված, փոխ. ասած ձևից, դուցէ մի քանի բարբառներում նրան պէտք է մերձեցնել ասած ձևին, որը նախապէս բոլորովին կորցրել է ի հնչիւնը: Վճիռը կախուած է մի և նոյն բառի միւս կրճատ ձևերից, միշտ երկու ուղղութեամբ, երբ արմատից մնում է կամ աս, որից և ասու՝ մահացոց բարբառում սեռ. հոլով, Ասպաուր կամ ծ., որից ծատուր. երկու դէպքում էլ փոխանակ Ասվածատուրի կամ հայահան (հա՛հ) փոխադրութեամբ՝ Աստուածատուրի: . . . Նոյն բառի ուրիշ կրճատ յայտնի նոր ձևերից մեր համար արժէք ունի այն, որը յայտնի է Խոյի բարբառի կողմնակի հոլովների ձևերով-Սեռ. աստ-ու, Բաց. աստ-էն, և աստ-մէն, Գործ. աստ ով: Կրկնուող աստ ապացուցանում է ա-ի հետ տեղի ունեցած երբեմն այլադանութիւնը, որ Ուղ. (ասծ) մերձենում է՝ ասվատ-ին||'ասւատ ասրտ-ի միջոցով < ասուտ||'ասստ-ին. թէև այժմ նոյն ենթ բարբառը Ուղղ. ասված է: Մոկաց առածները (Փշրանքներ ժող. բանահիւսութիւնից, Թիֆլ. 1893) նոյն արմատն են երևան հանում արակ. հոլ. աստ-ու. բայց բերանացի գրականութեան այլ դէպքերում սովորական ձևերն են. Ուղ. (հայահան-haück,) աստուած, Բացառական, երբեմն՝ աս-

տժուց Երբեմն աստըծուց: Կրճատ ձեւերում վերջին վանկը կորցնելով այլադանութիւններէց հան և՛ ասպար և՛ ասփար, որոնք առընչութիւն ունեն նախատիպ ասրացի-ի ('sabaթ-)-ի հետ: այս այլադանութիւնները հասել են մեզ սահուն յառաջախաղացութեամբ միայն բարդ բառի կազմով: Այլադանութիւնները ինքն ըստ ինքեան փամանակի ընթացքի հետ պէտք է ենթարկուէին նոր փոփոխութեան, այդ այլադանութիւնները անկորուստ պահող բարբառները կորցնում են ր, նախապէս մեղմացնելով և յ դարձնելով, այսպէս օրինակ մոկաց բարբառում ունենք թափփի, իտու, իբի, ձի, մի, էսու, էնու, խամա, լիշում, փոխանակ թափփի, իտու, իբի, (հայ հաճեբեր), ձիւ (ձեր) միւ (մեր), էսու, էնու, խամար (hau) համար), լիշումի, հեռաբար ասպար և ասփար-ից պէտք է (ասպար և ասփար-ի միջոցով) ստացած լինեն ասպա և ասփա: այս նուազ ձեւութիւնները, յերաւի, պահպանուել են, բայց, այս նուազ Ասպատուր և ասփատուր անունի կազմի մէջ:

Մենք համարեա բառացի թարգմանութեամբ մէջ բերինք պ. Ն. Մառի Սարաղիոս (Σαβᾶζιος) բառի մասին տեսութեան գլխաւոր կէտերը, և վերջացնում ենք մեր մատենախօսութիւնը յարդելի ճեմարանական ուսուցչապետի ճիշդագրական տախտակը ևս դնելով:

Յուսիկ Արեւս:



Նոր—Նախիջևանի Հայոց Եկեղ. Հոգարարձութիւնը

Ստացանք Նոր-Նախիջևանի Հայոց Եկեղեցական Հոգարարձութեան 1910 թուականի հաշիւը:

Հայերէն ուսուցիչներէն է կազմուած այդ հաշիւը և շատ լաւ տպաւորութիւն է գործում ընթերցողի վրայ ոչ միայն իւր արտաքինով-մաքուր և գեղեցիկ տպագրութիւն Աւագեանի՝ Ն. Նախիջևանում—այլ և իւր բովանդակութեամբ: Ամեն ինչ պարզ է, որոշ և մէկին, երեւում է, որ գործողները ունին մշակած գործունէութեան որոշ ուղի, որին և հետևում են անշեղ:

«Նոր-Նախիջևանի հայազգի աղքատախնամ Եկեղեցական Հոգարարձութիւնը» 1910 թուականով բոլորել է իւր գոյութեան 21-րդ տարեշրջանը և ամենայն տարի հայ հասարակութեան մատուցել է իւր մանրամասն հաշիւները, որոնք միշտ էլ անթերի են նկատուած:

ՍԱԲԱԶԻՈՍ ԱՍՏՈՒԱԾ ԱՌ ՀԱՅՍ

ՃԻԻՂԱԴՐԱԿԱՆ ՏԱԽՏԱԿ.

Uupupupu wusnuw' un Zmij.

This image shows a vertical strip of a manuscript page, likely from a liturgical book or a decorative text. It features a series of decorative initials and flourishes in brown ink on aged parchment. The decorations include stylized letters and elaborate scrollwork, typical of medieval manuscript illumination. The strip is oriented vertically, showing a sequence of these decorative elements.

Աստուած նշանակութեամբ Սաքագիրսի (Σαβακιος) հայապան և արմհնապան ձևերը,

Grzeczność.)

small
 large
 small
 small
 small
 T
 small
 small
 small
 Q

 small
 large
 small
 small
 small
 T
 small
 small
 small
 small
 small
 small

V

५३

[—]—


✓

(Pittsburg) Pittsburg

246.

[illegible][illegible]



Uph



۵۷

[illegible]

[Faint handwritten notes, possibly bleed-through from the reverse side.]

Jun

*
|||||δ>* |||||δ
|||||δ> * |||||δ
|||||δ> |||||δ

[illegible]

ဟိမဝန္တာ

III IIII 8

188-1

三三三

1) Նըջանները բաժանումն իսկ լեզուաբանական է, և ոչ յեշտապարտանքի։ Բանականաբար դանադան շըջաններն առանձին ձևերը կարող են պատահել որպես միացություններ, շարունակաբար մինչև մեր օրերը։